Հաստատված է
31.08.2022
……
ամբիոնի 1-ին նիստում
(արձ. թիվ 1) ամբիոնի պետ՝
……..……..……..
(ստորագրություն)

(ամիս ամսաթիվ)

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ		Հայոց լեզու և գրականություն
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ		
ՖԱԿՈՒԼՏԵՏ		ՀՀ ոստ. կրթահամալիրի հեռակա ֆակուլտետ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ		Լեզուների ամբիոն lezuneriambion@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ		Պայմանագրային դասախոս, բ.գ.թ. Լ. Հակոբյան, 077 63 99 91
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ		2022-2023 ուս. տարվա Բակալավր

ԿՐԵԴԻՏՆԵՐ		
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ		Դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 20 ժամ, որից 12 ժամ նախատեսվում է 1-ին կիսամյակի, իսկ 8 ժամ՝ երկրորդ կիսամյակի համար:Դասընթացն ավարտվում է քննությամբ:
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ		Դասընթացը կառուցվում է հիմնականում դպրոցի հայոց լեզվից ունեցած գիտելիքների իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ		Դասընթացի բովանդակությունը ներկայացված է հետևյալ բլոկների տեսքով՝ • Հայոց լեզվի տեղն ու դերը համաշխարհային լեզուների շարքում: Հայոց լեզվի ծագումը և զարգացման շրջափուլերը: • Գրական լեզվի երկու տարբերակները՝ արևելահայ գրական լեզու և արևմտահայ գրական լեզու: Գրական լեզու և բարբառներ:

		• Հնչյունաբանություն: Առարկան և խնդիրները: • Բառագիտություն. բառապաշար, քրեական աշխարհի ժարգոն, բառակազմություն և իմաստաբանություն • Ձևաբանություն.խոսքի մասերի դասակարգումը: • Շարահյուսություն. նախադասությունների տեսակները:: • Նախադասության գլխավոր և երկրորդական անդամներ: • Ուրիշի խոսք: Ուղղակի խոսքի տեսակները: • Կետադրություն: • Ոճաբանություն: Ոճերի տեսակները՝ իրադրական, անհատական, գործառական: • Պաշտոնական ոճի ենթաոճերը: • Վարչա-գործարարական ոճի առանձնահատկությունները; • Գործնական գրություններ: • Մասնագիտական տերմիններ/եզրեր/: • Ակսել Բակունցի արձակը • Վահան տերյանի պոեզիան • Եղիշե Չարենցի պոեզիան
ՆՊԱՏԱԿ **ԽՆԴԻՐ/ՆԵՐ**		Դասընթացի հիմնական նպատակն է՝ • Սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ հայերենի ուղղագրական, կետադրական կանոնների, գործնական գրությունների, իրավաբանական և գրականագիտական տերմինների և դրանց կիրառման վերաբերյալ: Դասընթացի խնդիրներն են՝ • ճանաչել ժամանակակից հայոց գրական լեզվի օրինաչափություններն ու առանձնահատկությունները, • արժևորել հայոց լեզվի դերն ու նշանակությունը ոստիկանության աշխատանքում:
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ **1. Իմանա** **2. Կարողանա** **3. Տիրապետի**		Սովորողները պետք է իմանան՝ • հայերենի ուղղագրական, կետադրական կանոնները, • գործնական գրությունները, իրավաբանական և գրականագիտական տերմինները, • մասնագիտական խոսք կառուցելու հմտությունները: Սովորողները պետք է կարողանան՝ • կապակցված խոսք կազմել, • լեզվական և գրականագիտական գիտելիքները կիրառել ոստիկանական համակարգում: Սովորողները պետք է տիրապետեն՝ • ուղղագրության և կետադրության սկզբունքներին, • գործնական գրությունների կազմմանը և դրանց

		կիրառությանը ոստիկանական ծառայությունում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		1. Բարսեղյան Հ., Ուղղագրական-ուղղախոսական-տեղեկատվական բառարան, Ե., 1973: 2. Դավթյան Յու., Ժամանակակից հայերենի կետադրության ինքնուսույց, Ե., 2010: 3. Դավթյան Յու., Հայերենի ուսուցման հարցեր, Ե., 2014: 4. Դավթյան Յու., Նախադասության վերլուծություն և գծապատկերներ, Ե., 2015: 5.Մուսայելյան Ռ., Հայոց լեզու, Ե. 2013:
Լրացուցիչ		1. Աբրահամյան Ս., Հայոց լեզու. Շարահյուսություն, Ե., 2004: 2. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու. Ձևաբանություն, Ե., 1989: 3. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու. Շարահյուսություն, Ե., 1987: 4.Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Ե. 1999: 5. Եզեկյան լ. Հայոց լեզու, 6. Գաբրիելյան Վ. Գրավոր խոսք,

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ		Բաղադրիչ 1- 10% (հաճախում) Բաղադրիչ 2- 30% (Միջանկյալ 1) Բաղադրիչ 3- 30% (Միջանկյալ 2) Բաղադրիչ 4- 20% (ռեֆերատ, թղթապանակ) Բաղադրիչ 5- 10% (ամփոփիչ ստուգում)
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ		

Գնահատման բազմագործոն համակարգ	Գնահատականի թվային համարժեքը	ԿՓԵՀ / տառային գնահատական	Ուսանողների գիտելիքների բնութագիր	
100-97 96 - 90	4.0 3, 7	A	Անցողիկ գնահատականներ	Հանրագումարային ժամանակաշրջան
89 - 85 84 - 80	3, 3 3, 0	B		
79 - 70	2.7	C		
69 - 65	2.3	D		
64 - 60	2.0	E		
59 - 41	1.7	FX	ՈՉ ԲԱՎԱՐԱՐ	
40-ից ցածր		F	ԱՆԲԱՎԱՐԱՐ	
100-60	4.0-2.0	S	Անցողիկ գնահատականներ	Միջանկյալ ժամանակաշրջան
59 - 41	1.7	UX	ՈՉ ԲԱՎԱՐԱՐ	
40-ից ցածր		U	ԱՆԲԱՎԱՐԱՐ՝	

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ /		

ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ		
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Ներկայություն		Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին:
Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:
Ինքնուրույն և գործնական աշխատանքներ		Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում ուսանողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ

ՕՐ/ՇԱԲԱԹ	ԹԵՄԱ/ԺԱՄ	ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ	ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	ԳՆԱՀԱՏՈՒՄ
1-ին շաբաթ	Ժամանակակից հայոց լեզուն իբրև ազգային, պետական և գրական լեզու: Հայերենը և աշխարհի լեզուները: Հայերենի տեղը լեզուների համակարգում: **Գործնական պարապմունք /2 ժամ/**	**Տեսակը՝** գործնական պարապմունք • դասախոսություն • հարցուպատասխան • բանավեճ-քննարկում **Նպատակը՝** սովորողներին գաղափար տալ հայոց լեզվի մասին, ներկայացնել հայոց լեզվի դերն ու նշանակությունը ոստիկանության աշխատանքում: **Քննարկվող հարցերը՝** ա)ժամանակակից հայոց լեզուն իբրև ազգային, գրական և պետական լեզու: բ) հայերենը և աշխարհի լեզուները, հայերենն իբրև հնդեվրոպական լեզու: **Քննարկվող հարցերի ամփոփում:**		**Սովորողը կարողանում է տարբերել և սահմանել ազգային լեզու, պետական լեզու և գրական լեզու հասկացությունները:** **Աշխարհի լեզուների համակարգից առանձնացնում է հայերենը՝ որպես ինքնատիպ լեզու:**
2-րդ շաբաթ	**Հայոց լեզվի զարգացման շրջափուլերը. գրաբար, միջին հայերեն և աշխարհաբար: Ալևելահայ և արևմտահայ գրական լեզուներ: Գրական լեզու և բարբառներ:** **Վ. Տերյան. կյանքը և գրական գործունեությունը Գործնական պարապմունք/2 ժամ /**	**Տեսակը՝** գործնական պարապմունք • պասիվ դասախոսություն, • ինտերակտիվ զրույց, • քննարկում: **Նպատակը՝** գաղափար տալ հայոց լեզվի նախագրային և գրային էտապների, արևելահայ և արևմտահայ գրական լեզուների, բարբառների մասին: **Քննարկվող հարցերը՝** ա) նախագրային շրջան/ վաղնջական և հնագույն/, բ) հին կամ գրաբար/ գրաբարի կարևոր գործառույթները/, գ) միջին հայերեն կամ Կիլիկիո հայերեն, դ)նոր կամ աշխարհաբար, ե)գրական լեզու և բարբառներ: **Քննարկվող հարցերի ամփոփում:**	Գործնական գրություն. **Ինքնակենսագրություն:** Ուղղագրական և կետադրական առաջադրանքներ:	**Սովորողը գիտի հայոց լեզվի զարգացման փուլերը, գրաբարի կարևոր գործառությունները, միջին յայերենի առանձնահատկությունները, աշխարհաբարը՝ իր երկու ճյուղավորումներով:** **Կարողանում է տալ գրական լեզվի և բարբառի սահմանումները:**
3-րդ		**Տեսակը՝** գործնական պարապմունք		**Սովորողը գիտի հայերենի**

շաբաթ	**Հնչյունաբանություն. ուսումնասիրության առարկան, խնդիրները և նպատակները:** **Գործնական պարապմունք /2 ժամ /**	• ինտերակտիվ զրույց, • դասախոսություն (ավանդական): **Նպատակը՝** գաղափար տալ հայերենի հնչյունական համակարգի մասին: **Քննարկվող հարցերը՝** ա)հնչյունի սահմանումը, բ)հնչյունների դասակարգումը, գ)հնչյուններն ըստ ձայնի պարունակության, դ)Մաշտոցը և գրերի գյուտը, ե)այբուբենի թվային արժեքը: **Քննարկվող հարցերի ամփոփում:**	Ուղղագրական առաջադրանքներ: Գործնական գրություն. **Զեկուցագիր:**	**այբուբենը, ճանաչում է ձայնավոր և բաղաձայն հնչյունները, հեշտությամբ դասակարգում է բաղաձայն հնչյուններն ըստ ձայնի պարունակության:** **Սովորողը կարողանում է օգտվել այբուբենի թվային արժեքից:**
4-րդ շաբաթ	**Բառագիտություն. Բառակազմություն:** **Գործնական պարապմունք /2 ժամ/**	**Տեսակը՝** գործնական պարապմունք • հարցուպատասխան, • բանավեճ-քննարկում: **Նպատակը՝** գաղափար տալ բառապաշարի, նրա փոփոխությունների, բառերի կազմության մասին: **Քննարկվող հարցերը՝** ա)հայերենի բառապաշարը և հարստացման ուղիները, բ)պարզ և բաղադրյալ բառեր, գ)արմատ և ածանց, դ)բաղադրյալ բառերի տեսակները, ե)հապավումների տեսակները և ուղղագրությունը, զ)համառոտագրություն: **Քննարկվող հարցերի ամփոփում:**	Ուղղագրական առաջադրանքներ: Գործնական գրություն. **Տեղեկանք, Լիազորագիր:**	**Սովորողը գիտի բառի սահմանումը, ճանաչում է ակտիվ և պասիվ բառապաշարը, գիտի բառապաշարի հարստացման ուղիները՝ փոխառություն և բառաշինություն:** **Կարողանում է բառերը բաժանել բաղադրիչների, տարբերում է արմատները և ածանցները:** **Գիտի հապավումների տեսակները, տիրապետում է ուղղագրությանը:**
5-րդ շաբաթ	**Իմաստաբանություն:** **Ե. Չարենց. կյանքը և գրական գործունեությունը** **Գործնական**	**Տեսակը՝** գործնական պարապմունք • պասիվ դասախոսություն, • ինտերակտիվ զրույց: **Նպատակը՝** գաղափար տալ բառերի իմաստների և իմաստային փոփոխությունների մասին, բացատրել, թե ինչ է բառիմաստի ընդլայնումը, բառիմաստի նեղացումը և	Թեմայից բխող այլ վարժություններ:	**Սովորողը գիտի, թե ինչ է ուսումնասիրում իմաստաբանությունը, ճանաչում է մենիմաստ և բազմիմաստ բառերը** **Կարողանում է դասակարգել բառերն ըստ իմաստի և ձևի:**

	պարապմունք /2 ժամ/	բառիմաստի շրջումը: **Քննարկվող հարցերը՝** ա)մենիմաստ և բազմիմաստ բառեր, բ)բառերն ըստ իմաստի և ձևի: **Քննարկվող հարցերի ամփոփում:**		
6-րդ շաբաթ	**Քերականություն. ձևաբանություն:Խոսքի մասերի դասակարգումը:** **Գործնական պարապմունք/2 ժամ/**	**Տեսակը՝** գործնական պարապմունք • դասախոսություն, • ինտերակտիվ զրույց, • քննարկում: **Նպատակը՝**գաղափար տալ խոսքի մասերի մասին, դասակարգել խոսքի մասերը: **Քննարկվող հարցերը՝** ա) գոյական անուն, բ)ածական անուն, գ)թվական անուն, դ)դերանուն: **Քննարկվող հարցերի ամփոփում:**	Թեմայից բխող վարժություններ: Գործնական գրություն. **Դիմում:**	**Սավորողը գիտի՝ որն է քերականության ուսումնասիրության առարկան, ճանաչում է հայերենի 10 խոսքի մասերը, կարողանում է թվարկել նրանք քերականական հատկանիշները:**
7-րդ շաբաթ	**Ձևաբանություն:** **Բայ:** **Նյութական իմաստից զուրկ խոսքի մասեր:** **Գործնական պարապմունք /2 ժամ/**	**Տեսակը՝** գործնական պարապմունք • հարցուպատասխան, • բանավեճ-քննարկում: **Նպատակը՝** գաղափար տալ բայի էական քերականական հատկանիշների և քերականական ու վերաբերմունքային խոսքի մասերի մասին: **Քննարկվող հարցերը՝** ա)բայի քերականական առանձնահատկությունները, բ)կապ, գ)շաղկապ, դ)ձայնարկություն և վերաբերական: **Քննարկվող հարցերի ամփոփում:**		**Սովորողը գիտի բայի սահմանումը, տարբերում է դիմավոր և անդեմ ձևերը, կարողանում է խոնարհել բայը բոլոր եղանակներով, ժամանակներով:** **Ճանաչում է նյութական իմաստից զուրկ խոսքի մասերը,տարբերում է քերականական խոսքի մասերը և վերաբերմունքային խոսքի մաերը: Կարողանում է դասակարգել կապերը, շաղկապները, ձայնարկություններն ու վերաբերականներն ըստ**

				տեսակների:
8-րդ շաբաթ	**Շարահյուսություն: Նախադասություն:** **Գործնական պարապմունք /2 ժամ/**	**Տեսակը՝** գործնական պարապմունք • հարցուպատասխան, • բանավեճ-քննարկում: **Նպատակը՝** գաղափար տալ նախադասության, նրա տեսակների, կազմության մասին: **Քննարկվող հարցերը՝** ա)նախադասություններն ըստ հնչերանգի, բ)միակազմ և երկկազմ նախադասություններ, գ)պարզ նախադասություն, դ)բարդ նախադասություն.բարդ համադասական և բարդ ստորադասական: **Քննարկվող հարցերի ամփոփում:**	Թեմայից բխող վարժություններ: Գործնական գրություն. **Բացատրագիր:**	**Սովորողը գիտի նախադասության սահմանումը, ճանաչում է պարզ, բարդ նախադասությունները, բարդ նախադասության տեսակները: Կարողանում է ինքնուրույն կազմել բարդ կառույցներ և կետադրել:**
9-րդ շաբաթ	**Շարահյուսություն: Նախադասության անդամներ:** **Ա. Բակունց. կյանքը և գրական գործունեությունը** **Գործնական պարապմունք /2 ժամ/**	**Տեսակը՝** գործնական պարապմունք • մտագրոհ, • բանավեճ-քննարկում: **Նպատակը՝** գաղափար տալ նախադասության գլխավոր և երկրորդական անդամների մասին: **Քննարկվող հարցեր՝** ա)ենթակա և ստորոգյալ:Ենթակայի արտահայտությունը, ստորոգյալի կազմությունը, բ)գոյականական անդամի լրացումներ, գ)բայական անդամի լրացումներ: **Քննարկվոր հարցերի ամփոփում:**	Թեմայից բխող վարժություններ:	**Սովորողը ճանաչում է նախադասության գլխավոր և երկրորդական անդամները, գիտի ենթակայի արտահայտությունը, ստորոգյալի կազմությունը: Գրավոր խոսքի մեջ կարողանում է ճիշտ կետադրել նախադասության բազմակի անդամները, բացահայտիչը, հեռացած հատկացուցիչը և հետադաս ծավալուն որոշիչ բառակապակցությունը:**
10-րդ շաբաթ	**Ոճ: Ոճերի տեսակները:** **Գործնական պարապմունք /2 ժամ/**	**Տեսակը՝** գործնական պարապմունք • հարցուպատասխան • բանավեճ-քննարկում: **Նպատակը՝** գաղափար տալ ոճի, նրա տեսակների մասին: Դասակարգել ոճերը: **Քննարկվող հարցերը՝** ա)գաղափար ոճի մասին, բ)ոճերի տեսակները՝ անհատական,	Գործնական գրություն. **Բնութագիր:** Թեմայից բխող վարժություններ:	**Սովորողը գիտի ոճերի տեսակներն ու առանձնահատկությունները: Ելնելով պաշտոնական ոճի առանձնահատկություններից ու պահանջներից՝ կարողանում է մասնագիտական ճիշտ խոսք**

		իրադրական, գործառական, գ)գործառական ոճերի առանձնահատկությունները, դ)պաշտոնական ոճի առանձնահատկությունները: ա) **Քննարկվող հարցերի ամփոփում:**		**կառուցել:**